

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Հայաստանի Հանրապետության առևտրաարդյունաբերական պալատը (այսուհետև՝ Պալատ) ստեղծվել է մարզային(այդ թվում Երևան քաղաքի) առևտրաարդյունաբերական պալատների (այսուհետև՝ Մարզային պալատ) կողմից 2002թ. ապրիլի 19-ին հրավիրված հիմնադիր համագումարի որոշմամբ:
- 1.2. Պալատը գործում է ՀՀ Սահմանադրության, ՀՀ Օրենսդրության, «Առևտրաարդյունաբերական պալատների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության համաձայն:
- 1.3. Պալատը հանդիսանում է իրավաբանական անձ, ունի առանձնացված գույք, կարող է իր անունից ձեռք բերել գույքային և ոչ գույքային իրավունքներ, կրել պարտավորություններ, լինել հայցավոր և պատասխանող դատարանում:
- 1.4. Պալատը պատասխանատվություն չի կրում իր անդամների պարտավորությունների համար, անդամներն իրենց հերթին պատասխանատվություն չեն կրում Պալատի պարտավորությունների համար:
- 1.5. Պալատը գործում է կամավորության, իրավահավասարության, ինքնակառավարման և հրապարակայնության սկզբունքներով:
- 1.6. Պալատի անվանումն է.  
Հայերեն՝ Հայաստանի Հանրապետության առևտրաարդյունաբերական պալատ,  
կրճատ՝ ՀՀ ԱԱՊ  
Ռուսերեն՝ Торгово-промышленная палата Республики Армения.  
կրճատ՝ ТПП РА  
Անգլերեն՝ Chamber of Commerce and Industry of the Republic of Armenia.  
կրճատ՝ CCI RA
- 1.7. Պալատի գտնվելու վայրն է՝ Երևան 0026, Գ.Նժդեհի 26:

## 2. ՊԱԼԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

- 2.1. Պալատի հիմնական նպատակն է օրենսդրությամբ սահմանված լիազորությունների շրջանակներում իր անդամների ընդհանուր շահերի և իրավունքների պաշտպանությունը և դրանց ներկայացումը Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև օտարերկրյա պետություններում:
- 2.2. Պալատի խնդրիներն են՝
  - 2.2.1. Հայաստանի տնտեսության զարգացմանը և այն միջազգային տնտեսական համակարգին ինտեգրացնելուն նպաստելը.
  - 2.2.2. ձեռնարկատիրության բոլոր ձևերի համակողմանի և ներդաշնակ զարգացմանն օժանդակելը.
  - 2.2.3. օտարերկրյա ձեռնարկատերերի հետ առևտրատնտեսական և գիտատեխնիկական կապերի ամրապնդմանն աջակցելը.
  - 2.2.4. ձեռնարկատիրական գործունեության համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը նպաստելը.
  - 2.2.5. պետության կողմից սահմանված գերակայություններին համապատասխան ձեռնարկատիրական գործունեության տարածքային զարգացմանը նպաստելը.
  - 2.2.6. տնտեսավարող սուբյեկտների, ինչպես նաև դրանց և պետական մարմինների միջև համագործակցության հաստատումը.

- 2.2.7. Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրության ոլորտի կադրերի պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման համակարգի կայացմանն ու զարգացմանն աջակցելը, այդ բնագավառում ծրագրերի մշակմանն ու իրականացմանը մասնակցելը.
- 2.2.8. անհատ ձեռնարկատերերին, առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններին, միություններին և ասոցիացիաներին տեղեկատվական և խորհրդատվական վճարովի, անվճար կամ մասնակի հատուցմամբ ծառայություններ մատուցելը, ձեռնարկատիրության տեղեկատվական սպասարկման ենթակառուցվածքների կազմավորմանն աջակցելը.
- 2.2.9. առևտրային կազմակերպությունների, ձեռնարկատերերի միջև ծագած վեճերի կարգավորմանն օժանդակելը.
- 2.2.10. ձեռնարկատիրությանն աջակցող ենթակառուցվածքների ստեղծմանն ու զարգացմանը նպաստելը.
- 2.2.11. սույն կանոնադրությամբ նախատեսված այլ խնդիրների իրականացումը:
- 2.3. Պալատն աջակցում է իր անդամների կողմից արտադրված ապրանքների և ծառայությունների արտահանման, օտարերկրյա իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ առևտրատնտեսական և գիտատեխնիկական համագործակցության ձևավորմանը և ամրապնդմանը:

#### **2.4. Պալատի գործառույթներն են՝**

- 2.4.1. պետական և ոչ պետական մարմիններում, հիմնարկներում և կազմակերպություններում իր անդամների օրինական շահերի ներկայացում և պաշտպանում.
- 2.4.2. սահմանում է Հայաստանի Հանրապետության այն առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ոչ պետական գրանցամատյանի վարման կարգը, որոնց ֆինանսատնտեսական վիճակը վկայում է հանրապետության տարածքում և օտարերկրյա պետություններում ձեռնարկատրիական գործունեության մեջ նրանց հուսալի և վստահելի գործընկեր լինելու մասին.
- 2.4.3. ոչ պետական գրանցամատյանի վարում, որում ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության այն առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը, որոնց ֆինանսատնտեսական վիճակը վկայում է հանրապետության տարածքում և օտարերկրյա պետություններում ձեռնարկատրիական գործունեության տեսանկյունից դրանց վստահելիության և հուսալիության մասին («Վստահելի գործընկեր» գրանցամատյան).
- 2.4.4. հայրենական և օտարերկրյա առևտրային կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի դիմումի հիման վրա ապրանքների անկախ փորձաքննության անցկացում, դրանց որակի, քանակի և կոմպլեկտայնության վերահսկողություն և ստուգում.
- 2.4.5. հայրենական և օտարերկրյա առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, նշանների, սպասարկման նշանների և ապրանքների ծագման, վայրերի անվանումների գրանցման, ինչպես նաև ցուցահանդեսներին մասնակցելու գործում աջակցության ցուցաբերում.
- 2.4.6. գործարար ծրագրերի մշակում.
- 2.4.7. տեղեկատվական շտեմարանների ստեղծում.

- 2.4.8. Հայաստանում և արտասահմանում ցուցահանդեսների և տոնավաճառների կազմակերպում, դրանցում հայ գործարարների մասնակցությանն օժանդակում.
- 2.4.9. թերթերի, ամսագրերի և այլ տպագիր նյութերի հրատարակում.
- 2.4.10. մասնակցությունն ձեռնարկատիրական գործունեությունը կարգավորող օրենքների և իրավական այլ ակտերի նախագծերի մշակմանը.
- 2.4.11. Մարզային պալատների գործունեության համակարգում և ներկայացում ինչպես հանրապետությունում, այնպես էլ օտարերկրյա պետություններում.
- 2.4.12. Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությամբ եզրակացությունների կամ առաջարկությունների ներկայացում հանրապետության տնտեսության զարգացման հարցերով.
- 2.4.13. միջազգային առևտրային պայմանագրերին և Հայաստանի միջազգային պայմանագրերի դրույթներին համապատասխան անհաղթահարելի ուժի հանգամանքների (ֆորս-մաժոր), ինչպես նաև հանրապետությունում ընդունված գործարար շրջանառության սովորույթների վկայում.
- 2.4.14. իրեն կից մշտապես գործող արբիտրաժային հաստատության ստեղծում .
- 2.4.15. ապրանքների ծագման սերտիֆիկատների (հավաստագրերի) տրամադրում և օրենսդրությամբ սահմանված կարգով դրանց արժանահավատության համար պատասխանատվության կրում (ապրանքների ծագման հավաստագրերի տրամադրման կարգը և վճարի չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը).
- 2.4.16. մասնակցությունն փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցության պետական ծրագրերի մշակմանը և իրականացմանը.
- 2.4.17. օրենսդրությանը չհակասող և իր կանոնադրական խնդիրներից բխող այլ գործունեության իրականացում:

### **3. ՊԱԼԱՏԻ ԱՆՂԱՄՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԻՐՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

- 3.1. Պալատի անդամ են համարվում Մարզային պալատները, ինչպես նաև Մարզային պալատների անդամները, որոնք ընդունում են Պալատի կանոնադրությունը, դրա նպատակներն ու խնդիրները, ցանկանում են մասնակցել դրա գործունեությանը և վճարում են անդամավճար:
- 3.2. Պալատը կարող է ունենալ նաև պատվավոր անդամներ:
- 3.3. Մարզային պալատները իրենց անդամների անդամավճարներից ստացված գումարի մի մասը մասհանում են Պալատին որպես անդամավճար՝ Պալատի համագումարի կողմից սահմանված չափով ու կարգով:
- 3.4. Պալատի անդամն իրավունք ունի՝
  - 3.4.1. ընտրել և ընտրվել պալատի ղեկավար մարմիններում.
  - 3.4.2. Պալատի գործունեության վերաբերյալ ղեկավար մարմինների քննարկմանը ներկայացնել առաջարկություններ՝ Պալատի կանոնադրությամբ սահմանված կարգով.
  - 3.4.3. արտոնյալ պայմաններով կամ անվճար օգտվել Պալատի կողմից մատուցվող ծառայություններից.
  - 3.4.4. օգտվել պալատի կանոնադրությամբ իրենց վերապահված այլ իրավունքներից:
- 3.5. Պալատի պատվավոր անդամը համագումարին և նախագույթյան նիստերին կարող է մասնակցել միայն խորհրդակցական ձայնի իրավունքով:
- 3.6. Պալատի անդամը պարտավոր է՝
  - 3.6.1. կատարել Պալատի ղեկավար մարմինների կողմից ընդունված որոշումները.
  - 3.6.2. վճարել անդամավճար.

3.6.3. նպաստել Պալատի կանոնադրական խնդիրների իրականացմանը.

3.6.4. կատարել Պալատի կանոնադրությամբ սահմանված այլ պարտականությունները:

#### 4. ՊԱԼԱՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

4.1. Պալատի կառավարման բարձրագույն մարմինը համագումարն է, որը գումարվում է հինգ տարին մեկ:

##### 4.2. Համագումարը՝

4.2.1. հաստատում է Պալատի կանոնադրությունը, փոփոխություններ է կատարում դրանում.

4.2.2. հինգ տարի ժամկետով ընտրում է նախագահ և նախագահություն.

4.2.3. հաստատում է Պալատի նախագահի և գործադիր տնօրենի հաշվետվությունները.

4.2.4. հաստատում է Պալատի ծրագրերը և գործունեության ուղղությունները:

4.2.5. սահմանում է անդամավճարի այն մասնաբաժինը, որը Մարզային պալատը հավաքագրված անդամավճարներից որպես անդամավճար պետք է վճարի Պալատին :

4.3. Համագումարի գումարման ժամանակի, տեղի և օրակարգի մասին համագումարի բացումից առնվազն մեկ ամիս առաջ Պալատի նախագահությունը տեղյակ է պահում Պալատի անդամներին:

4.4. Նախագահության անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ կարող է հրավիրվել արտահերթ համագումար:

4.5. Համագումարում քննարկվող հարցերը լուծվում են ներկա գտնվող պատվիրակների ձայների պարզ մեծամասնությամբ, իսկ կանոնադրության հաստատման, փոփոխման հարցերը՝ առնվազն երկու երրորդով:

4.6. Համագումարի քվորումը նրա պատվիրակների երկու երրորդն է:

4.7. Համագումարների միջև ընկած ժամանակահատվածում Պալատի ղեկավար մարմինը Պալատի նախագահությունն է:

##### 4.8. Պալատի նախագահությունը՝

4.8.1. ընտրում է Պալատի նախագահի տեղակալ (ներ).

4.8.2. հաստատում է Պալատի տարեկան ծրագրերը և ծախսերի նախահաշիվը.

4.8.3. գումարում է Պալատի հերթական և արտահերթ համագումարները.

4.8.4. հաստատում է տնօրինության կառուցվածքը և հաստիքացուցակը, գործունեության ուղղությունները.

4.8.5. նախագահի ներկայացմամբ պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է գործադիր տնօրենին.

4.8.6. արտահայտում է Պալատի դիրքորոշումը տնտեսական քաղաքականության հարցերի վերաբերյալ.

4.8.7. Պալատի նախագահի ներկայացմամբ ընտրում է Պալատի պատվավոր անդամներ, որոնք Պալատի որոշումների ընդունման գործընթացին կարող են մասնակցել միայն խորհրդակցական ձայնի իրավունքով:

4.8.8. որոշում է կայացնում Պալատի առանձնացված ստորաբաժանումների՝ մասնաձյուղերի, ներկայացուցչությունների, ինչպես նաև հիմնարկների՝ ստեղծման, վերակազմավորման և լուծարման մասին, հաստատում է դրանց կանոնադրությունները, նշանակում և ազատում է դրանց ղեկավարներին.

4.8.9. որոշում է կայացնում կազմակերպություններ հիմնադրելու և (կամ) դրանց մասնակցելու մասին.

- 4.8.10. որոշում է կայացնում Պալատին կից մշտապես գործող արբիտրաժային հաստատության ստեղծման մասին.
- 4.8.11. հաստատում է Պալատի և Մարզային պալատներին կից մշտապես գործող արբիտրաժային հաստատությունների կանոնադրությունները, վեճեր քննելու և լուծելու կանոնները.
- 4.8.12. որոշում է կայացնում Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս Պալատի ներկայացուցչություն ստեղծելու մասին:
- 4.8.13. մարզային պալատի նախագահի և (կամ) նախագահության կողմից կանոնադրական պահանջները չկատարելու կամ խախտելու դեպքում որոշում է կայացնում տվյալ Մարզային պալատի նախագահին և (կամ) նախագահությանը անվստահություն հայտնելու վերաբերյալ: Մարզային պալատի նախագահի և (կամ) նախագահության անվստահության հարցը կարող է դրվել իր լիազորությունների ժամկետում մեկ անգամ.
- 4.8.14. ընտրում է անկախ աուդիտորական կազմակերպություն՝ Պալատի ֆինանսական գործունեության վերահսկողության իրականացման համար.
- 4.8.15. իրականացնում է Պալատի կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:
- 4.9. Պալատի նախագահը, գործադիր տնօրենը և Մարզային պալատների նախագահներն ի պաշտոնե հանդիսանում են Պալատի նախագահության անդամ:
- 4.10. Պալատի նախագահության անդամները՝ գործադիր տնօրենից բացի, աշխատում են հասարակական հիմունքներով:
- 4.11. Նախագահության նիստերը գումարվում են առնվազն երեք ամիսը մեկ.
- 4.12. Նախագահության նիստերի քվորումը նախագահության անդամների երկու երրորդն է.
- 4.13. Նախագահության որոշումներն ընդունվում են ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:
- 4.14. Պալատի նախագահը՝*
- 4.14.1. հանդիսանում է Պալատի նախագահության նախագահ.
- 4.14.2. հրավիրում և վարում է նախագահության նիստերը.
- 4.14.3. իրականացնում է Պալատի ընդհանուր ղեկավարումը.
- 4.14.4. ներկայացնում է Պալատը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում.
- 4.14.5. Պալատի անունից կնքում է պայմանագրեր, համաձայնագրեր, տալիս է լիազորագրեր.
- 4.14.6. ստորագրում է նախագահության որոշումները.
- 4.14.7. իրականացնում է Պալատի կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:
- 4.15. Նախագահի բացակայության ժամանակ նրան փոխարինում է նախագահի տեղակալը.
- 4.16. Պալատի գործադիր մարմինը Պալատի տնօրինությունն է.
- 4.17. Պալատի տնօրինությունը գլխավորում է գործադիր տնօրենը:
- 4.18. Պալատի գործադիր տնօրենը՝*
- 4.18.1. ի պաշտոնե հանդիսանում է Պալատի նախագահության անդամ.
- 4.18.2. ղեկավարում է Պալատի ընթացիկ գործունեությունը.
- 4.18.3. կազմակերպում է Պալատի նախագահության որոշումների և նախագահի հանձնարարականների կատարումը.

- 4.18.4. Պալատի նախագահության հաստատմանն է ներկայացնում տնօրինության կառուցվածքը և գործունեության ուղղությունները.
- 4.18.5. Պալատի նախագահության հաստատմանն է ներկայացնում Պալատի տնօրինության գործունեության ծրագրերի նախագծերը, ինչպես նաև այդ ծրագրերի կատարման մասին հաշվետվությունները.
- 4.18.6. աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում տնօրինության աշխատակիցներին, որոշումներ է կայացնում նրանց խրախուսելու կամ տույժի ենթարկելու վերաբերյալ.
- 4.18.7. իր իրավասության շրջանակներում գործում է Պալատի անունից և իրականացնում է Պալատի կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:
- 4.18.8. առանց լիազորագրի գործում է պալատի անունից, կնքում է պայմանագրեր, համաձայնագրեր, տալիս է լիազորագրեր.

## **5. ՊԱԼԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ**

- 5.1. Պալատի ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է անկախ աուդիտորական կազմակերպության միջոցով, որի ընտրությունը կատարում է Պալատի նախագահությունը:

## **6. ՊԱԼԱՏԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԴՐԱ ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ**

- 6.1. Պալատի գույքը գոյանում է իր անդամների անդամավճարներից կամ փոխանցված գույքից, օրենքով չարգելված այլ աղբյուրներից:
- 6.2. Պալատի անդամների՝ Պալատին հանձնած դրամը և գույքը պալատի սեփականությունն է:
- 6.3. Պալատի անդամները Պալատին որպես սեփականություն հանձնած գույքի՝ ներառյալ անդամավճարների նկատմամբ իրավունքներ չեն պահպանում և իրենց անդամությունը դադարելիս հետ պահանջելու իրավունք չունեն:
- 6.4. Պալատն օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված կարգով իր հայեցողությամբ տիրապետում, տնօրինում և օգտագործում է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը, այդ թվում կարող է իր գույքն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակներով:
- 6.5. Պալատի միջոցները կարող են օգտագործվել միայն Պալատի կանոնադրությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրականացման համար:

## **7. ՊԱԼԱՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

- 7.1. Իր անդամների շահերն արտասահմանում առավել արդյունավետ ներկայացնելու համար Պալատը ստեղծում է ներկայացուցչություններ:
- 7.2. Ձեռնարկատիրական գործունեության հետ կապված հարցերով Պալատն իր անդամների շահերը ներկայացնում է Առևտրի միջազգային պալատում, Եվրոպալատում, Արդյունաբերական սեփականության պահպանության միջազգային ասոցիացիայում, Յուգոսլավիայի միջազգային բյուրոյում, Աշխատանքի միջազգային կազմակերպություններում, ինչպես նաև միջազգային այլ կազմակերպություններում:

## 8. ՊԱԼԱՏԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

- 8.1. Ձեռնարկատիրության տարբեր ձևերի զարգացմանն օժանդակելու, ինչպես նաև առանձին խնդիրների լուծման նպատակով պալատը կարող է ստեղծել հանձնաժողովներ:
- 8.2. Հանձնաժողովները ստեղծվում են Պալատի նախագահության որոշմամբ և գործում են դրա հաստատած կանոնակարգերին համաձայն:
- 8.3. Հանձնաժողովներն իրականացնում են ձեռնարկատիրական գործունեությունը կարգավորող իրավական ակտերի և դրանց կիրառման վերլուծություն, առաջարկություններ են մշակում դրանց կատարելագործման ուղղությամբ, ձևավորում են գործարար շրջանակների դիրքորոշումը տարբեր հարցերի վերաբերյալ:
- 8.4. Հանձնաժողովների նախագահները և անդամները նշանակվում և ազատվում են Պալատի նախագահության կողմից:

## 9. ՊԱԼԱՏԻ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

- 9.1. Պալատի լուծարումը հանգեցնում է դրա դադարմանը՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:
- 9.2. Պալատը կարող է լուծարվել համագումարի կամ դատարանի որոշմամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: